տեսական զարգացման հաջողությունները, պատգամավորները ասել են. «Սովետական Հայաստանը մեծ առաջադիմության է հասել նաև լուսավորության, գիտության, արվեստի և գրականության բնագավառում: Երկրում, որտեղ առաջ բնակչության միայն 15 տոկոսն էր գրագետ, ներկայումս անգրագիտությունը ամբողջովին վերացված է»: Պատգամավորները նշել են այն խոշոր գերը, որ հայերը խաղացել են Սովետական Միության Հայրենական պատերազմում:

Պատգամավորները նշել են, որ Ազգերի լիգան ընդունում էր հայերի իրավունքները Թյուրքիայի կազմի մեջ մնող հայկական նահանգների նկատմամբ: «Բոլոր հայերը և առհասարակ ամբողջ քրիստոնեական աշխարհը,— ասված է հայտարարության մեջ, հավատում են, որ ամերիկացիները հավատարիմ կմնան Վիլսոնի տրադիցիաներին և անկեղծորեն կաջակցեն հայ ժողովրդի արդարացի պահանջներին նրա պատմական հողերի վերաբերմամբ»:

Պատասխանելով հարցերին՝ պատգամավոր Զանկալյանը, որը հանդիսանում է ամերիկյան բանակի պաշտոնաթող կապիտան և գործարար շրջանների ակնառավոր ներկայացուցիչ, գովաբանել է ժողովը որպես ամենադեմոկրատական ժողով և բարձր գնահատական է տվել Սովետական կառավարության հյուրընկալությանը: Պատգամավոր Թերզյանը, որը հանդիսանում է «Ամերիկայի Հայկական Ազգային խորհրդի» նախագահ, հայտարարել է, որ խորհուրդը մտադիր է ամբողջ երկրում կամպանիա անցկացնել Թյուրքիայի կազմի մեջ մնող հայկական բոլոր տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու համար: Պատգամավորների խորհրդի փոխնախագահ Սելյանը Թյուրքական տիրապետության տակ գտնվող հայերի աղետալից դրությունը հակադրել է Սովետական Հայաստանի բնակչության վիճակին:

(«Սովետ. Հայաստան», 23 հոկտ., 1945 թ., № 226)

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՖԱՅԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԵՏ

Առիթն ունեցանք, տեսակցելու Կալիֆորնիայի Առաջնորդ Մամբրե եպիսկոպոս Գալֆայանի հետ, որը վերադառնալով Կաթողիկոսական ընտրությունից այժմ ստացել էր նորընտիր Հայրապետից արքեպիսկոպոսության տիտղոս: Նրան ընկերակցում էին Կալիֆորնիայի Տ. Կարապետ քահանա Գալֆայանը և պ. Առաքել Յազճյանը: Գալֆայան սրբազանը Միացյալ Նահանգներից մեկնել էր Ս. Էջմիածին Նյու-Յորքի պատգամավորների հետ միասին՝ Տիրան ծայրագույն վարդապետ Ներսոյան, որը կաթողիկոսական ընտրությունից հետո եպիսկոպոսության աստիճան ստացավ, Սիմոն ծայրագույն վարդապետ Մանուկյան, որը նույնպես եպիսկոպոսության աստիճան ստացավ, Հ. Բ. Ը. Միության Նյու-Յորքի կենտրոնական վարչության փոխատենապետ պ. Հայկ Քավուքչյան և կապիտան Ջիմ Զանկալյան, Նյու-Յորքի հյուր պատգամավորներ, ազգային խորհրդի անդամներ՝ պ. Պետրոս Թերզյան՝ ատենապետ և «Լրաբեր» թերթի խմբագրապետ, պ. Պատրիկ Սելյան՝ փոխ ատենապետ ազգային խորհրդի:

Մենք մի շարք հարցումներ ուղղեցինք սրբազան հորը, որոնց պատասխանեց խիստ փիրալիր:

Հ.— Ի՞նչպես ընդունեցին ձեզ Խորհրդային Հայաստանում:

Պ.— Մեր նավը Օդեսա պիտի երթար, բայց Քոնստանցա եկավ, ուր Սովետ Միության ներկայացուցիչը մեզ համար հոգաց մասնավոր ճեպընթաց Բուքրէշ մեկնելու համար: Հիանալի ընդունելություն ցույց տրվեց մեզ Բուքրէշում Սովետական Միության ներկայացուցիչ Դոնգուլովի կողմից, որն ամեն կերպով հեշտացրեց մեր ճամբորդությունը: Նա հատուկ ատվանակով մեզ առաքեց Երևան: Երևանում ամեն կարգադրություն եղել էր արդեն և մեզ ընդունեցին գրկաբաց:

Հ.— Քանի՞ պատգամավորներ կային:

Պ.— 112 պատգամավորներ ներկա էին արտասահմանյան բոլոր թեմերի կողմից— բացի Իրաք:

Հ.— Ի՞նչպես եղավ ընտրությունը և օծման հանդեսը:

Պ.— Ընտրությունը տեղի ունեցավ հունիս 22-ին, ուրբաթ, կեսօրից հետո: Իսկ օծումը 24 հունիսին մեծ հանդիսավորությամբ: Միաձայնորեն ընտրվեց հայոց

Հայրապետ Գևորգ Արքեպիսկոպոս Չեորեքչյան։

Հ.— Ի՞նչ տրամադրության մեջ է Մայր Երկրի ժողովուրդը։

Պ.— Ընդհանուր առմամբ ժողովուրդը շատ խանդավառված է, տեսնելով, որ եկեղեցին գրավում է իր բարձր դիրքը։ Շատ դոհ է որ Գևորգ 6-րդի պես դիվանագետ, կաբող մի անձ Հայրապետական աթոռի վրա է։ Շուտով կբացվի Գևորգյան ճեմարանը առաջիկա սեպտեմբեր ամսին։ Արդեն ունի 40 սաներ, որդեգրված արտասահմանյան և Մայր Երկրի թեմերի համար։

Հ.— Ի՞նչ տպավորություններ ունեցաք Հայաստանում։

Պ.— Իմ տպավորությունը հիացմունքից դատ ուրիշ բան չէ, քանի որ միայն 25 տարվա մեջ դուրս գալով 600 տարիների ավերակներից, պետք է խոստովանենք, երբեք չենք ունեցել նման մի շքեղ զարգացում։ Մենք այնտեղ տեսնում ենք օպերան, ակադեմիան, արվեստագետներ և այլն։ Պետք է շեշտել, որ երիտասարդ սերնդի մեջ բազմաթիվ են երկսեռ գիտնականներ և հատկապես իգական սեռը քիմիայի, բժշկության և այլ ճյուղերի մեջ։ Այս բոլորը ցայտուն ապացույց են տալիս Հայաստանի հիասքանչ վերելքի։

Հ.— Ի՞նչ է ձեր կարծիքը Ամերիկայի Ազգային Խորհրդի դեկլարացիայի մասին։

Պ.— Մենք բոլորս կողմնակից և համաձայն ենք այդ դեկլարացիային և որը շատ լավ ընդունելություն գտավ Մայր Հայրենիքի աշխատավորության կողմից։

Հ.— Ի՞նչ պիտի լինի գաղութահայության դիրքը այս պարագային։

Պ.— Ամերիկահայությունը միշտ ի հայտ է եկել բարոյական և նյութական աջակցություններով։ Ամենագլխավորը նոր սերնդի մեջ հայրենասիրությունը վառ պահելու աշխատանքն է, որ հետապնդվում է և պիտի հետապնդվի և մենք հավատում ենք, որ առանց խտրականության, առանց զանազանության ամեն հայ պիտի բոլորի Սովետ Կառավարության շուրջ և իր բարոյական և նյութական աջակցությունը անվերապահորեն տրամադրե, որպեսզի մեր ապագա ցեղի համար ապահովենք մեծ ընդարձակ մի հայրենիք։ Հայ ազգը այսօր պետք ունի իր բոլոր զավակների միության և համագործակցության։

Հ.— Ի՞նչքան է հայության թիվը Կալիֆորնիայում և ի՞նչ է նրանց վիճակը։

Պ.— Ամբողջ Կալիֆորնիայում 40—50.000 հայեր կան։ Ֆրեզնոյում նրանց թիվը հասնում է 7—10.000-ի, բոլորն էլ լավ պայմանների մեջ են։ Նրանք առևտրականներ են, ագարակապաններ, մեծ թվով տարված են պատերազմի դիմադրական աշխատանքներով, ունեն պահածոների, գինու, չոր պտուղների գործարաններ։ 1931—1933-ի շրջանում Ֆրեզնոյի շրջակայքի հայությունը գրեթե ամեն ինչ կորցրեց. սակայն վերսկսելով իր աշխատանքը հասավ շատ գայուն ու բարձր դիրքի. այսօր բոլորն էլ գրեթե կալվածատերեր են։ Ֆրեզնոյում ունենք 2 շաբաթաթերթեր, «Նոր օր» և «Ասպարեզ»։

Հ.— Սրբազան հայր, ե՞րբ եք մեկնելու։

Պ.— Անշուշտ երկար չի պիտի մնայի, սակայն ինձ հյուրասիրող պատվական բարեսիրտ Ռոման Իսաեվը, որը ձեր արժանավոր պատգամավորն էր կաթողիկոսական ընտրության և որը նորընտիր հայրապետի կնքահայրն եղավ ու արժանացավ Գրիգոր Լուսավորչի առաջին աստիճանի շքանշանին, մի մեծ պատիվ՝ մանավանդ որ նրանից առաջ այդ շքանշանը հաստատելու օրից մինչ այժմ միայն երկու հոգի էին ստացել և ինքը երրորդ անձն էր, իր կես միլիոն թուման արժող փառապանծ եկեղեցին լրացրել է և կիրակի 15 հուլիսին պիտի օծվի Կիլիկիո Կաթողիկոսի, Երուսաղեմի Պատրիարքի և այլ առաջնորդների ներկայությամբ, սիրով և ուրախությամբ մնացել եմ, որ մասնակից լինեմ այդ օծման փառահեղ ծիսակատարության։ Եվ մեծապես զգացված եմ ու շնորհակալ պ. Ռոման Իսաեվի այսքան արտաքոյ հյուրասիրությունից։ Օծումից անմիջապես հետո պիտի մեկնեմ։

Հ. Գ.

Շնորհակալություն հայտնելով նորին Սրբազնության իր տված տեղեկությունների համար մեկնեցինք խիստ լավ տպավորություններով։

(«Վերածնունդ» հուլիս, 153—1284)։